ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅԻՆ

ԱՐՑԻՒԻ

№ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լև Տօլստոյ . . . . Պատկեր.
Յաւերժ յիշատակ Լև Տօլստոյին . Զարդեհի.
Նամակ առ մանուկն . . . Լեւ Տօլստոյ.
Տօլստոյի ծննդավայրում . . Պատկեր.
Հովի աղօթքը (արաբական լեգենդ) Լեւ Տօլստոյ,
թարգմ. Տ. ք. Վարդանեան.
Գայլը . . . . . Լեւ Տօլստոյ,
թարգմ. Լեւոն Մ-ԵՒի.
Առակ գիւղացիների համար . . Լեւ Տօլստոյ,
թարգմ. Ա. Բարսեղի
Ռուս գիւղացիներին հաց են բաժանում . Պատկեր.
Աստուած ճշմարտութիւնը տեսնում է, բայց
շուտ չէ յայտնում . . Լեւ Տօլստոյ,
թարգմ. Ջ. Տ. Գ.
Լև Տօլստոյ և իր ինքնապիրը . . Պատկեր.
Իլիաս . . . . . Լեւ Տօլստոյ,
թարգմ. Լէօնիդ.
Համբերութիւնը յաղթող է . . Լեւ Տօլստոյ,
թարգմ. Լ. Մ.
Վերջին մրմունջներ . . . Ց. Ղազարաբ.
Լև Տօլստոյի ընտանիքի նամակները .

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ներկայ №-ի հետ ուղարկւում է թէ ՏԱՐԱԶի և թէ ԱՂԲԻՒՐի բոլոր բաժանորդներին **SOLUSOЗի** *կենսագրութիւնը։*

Ուղարկւում է ներկայ №-ի հետ և առաջիկայ 1911 թ. ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀի և ՏԱՐԱԶի բաժանորդագրական թերթ և մանրամասն յայտարարութիւն։

Հրաւիրում ենք մեր բաժանորդներին տարածել իրանց շրջանակներում

ԱՂԲԻՒՐ, ԱՌՈՂՋԱՊԱՀ ԵՒ ՏԱՐԱԶ

XXVIII XXVIII

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քառասմերորդ տարի 1910 № 11 Նոյեմբեր

Խմբագիր-Հրատարակիչ Տիգրան Նազարեան

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ



ԼԵՒ SOLUSOՅ

Մանուկների բարեկամ, մանուկներին աւրը պատգամներ աւող, աբանչելի առակներ ասող, գեղանի պատմուածքներ անող աւրը մարդս՝ Լեւ Տօլստօյը հոկտեմբերի 28-ին վաղ առաւօտեան Նամնայա Պօլեանայից ոդի ընկաւ դէպի յաւիտենականութիւն։ Անմահ հոգին աւանդ տաւ յաւիտենականութեան նոյեմբերի 7-ին առաւօտեան 6 ժ. 5 ր. Աստապօվօ երկաթուղային կայարանում, իսկ աճիւնը նոյեմբերի 9-ին իր փայփայած ծննդավայրում, Նամնայա Պօլեանայում, հօր մօրերի մէջ ըլրակումնամփոփուեց.

Ծոնկ չոգենք, խոնարհենք մեր գլուխները մեծ մարդուն,
Յաւերժ յիշատակ երգելով։

ՋՈՒՐՈՒՔԻ

ՆԱՄԱԿ ԱՌ ՄԱՆՈՒԿՆ

ЛЕВЪ ТОЛСТОЙ.

Ուրհատրդ եմ տալիս, սիրելի մանուկ, ամբողջ կեանքումդ, սկսած այսօրւանից մինչև մահդ, բոլոր ուժերդ լարես սովորելու, որ դերազանցօրէն բարի լինես ամենքի վերաբերմամբ, որոնց հետ պատահես կեանքումդ։ Դա շատ էլ հեշտ բան չէ. այդ էլ պիտի սովորել ամենպէս, ինչպէս մարդիկ սովորում են կարդալ, գրել, նւագել ջութակի կամ դաշնամուրի վրայ։ Միայն թէ այդ բոլորը կարելի է սովորել, աւարտել, բայց բարութեան ուսումնքին վերջ չկայ։

Եւ, որ դլխաւորն է, ոչ մի գիտութիւնից մարդ այնքան ուրախութիւն ու բերկրանք չի ստանում, որքան բարութիւն սովորելուց. որքան շատ ես սովորում, այնքան շատ ես ուրախանում և. ամենքը քեղ աւելի ու աւելի շատ են սիրում։ Ինդրում եմ, այդպէս վարւիր։

Ամեն րոպէ յիշիր, որ պէտք է բարի լինել։

ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅ.

1909 թ. մարտի 23-ն.
Նամնայա Պօլեանա.

Տօղաւորի ծնունդ ամայրը ու մ

ՀՈՎԻՒ ԱՂՕԹՔԸ

(Արաբական լեգենդա)

Л. Толстой.

Յիսուսի ծննդից հազարաւոր տարիներ առաջ Արաբիայի հրաբորբոք երկնքի տակ ապրում էր մի խեղակորոյս հովիւ։

Սա մի անգամ այսպիսի տագանապալի հառաչանք ուղղեց. «Աստուած, ահ, Տէր Աստուած իմ, արդեօք ես ինչ կերպ կըկարողանայի քեզ մօտ գալ եւ քո սարուկը դառնալ, որպիսի ուրախութեամբ ես քո ոտնամանները կըհագցնէի, քո ոտներդ կըլուանայի ու կըհամբուրէի նրանց. կըսանդրէի քո մազերը, շորերդ կըլուանայի, հաւաքած կանէի քո բնակարանը եւ քեզ համար իմ հօտից կաթը կըբերէի. իմ սիրտս փափագում է քեզ»։

Մովսէսը լսելով հովի աղօթքը՝ կատաղութեամբ լցուած բացականչեց.

«Անմիտ, դու հայհոյում ես Աստուծուն։ Աստուած անմարմին է. նրան ոչ քնակարան է հարկաւոր, ոչ շոր եւ ոչ էլ սպասաւոր. դու վատ բան ես խօսում»։ Բայց Աստուած ընդհատեց Մովսէսին.

Դու ինչո՞ւ ինձանից փախցնում ես իմ հաւատարիմ ծառային։ Ամեն մարդ իր առանձին խօսքն ունի եւ իր առանձին մարմինը։ Ինչոր քեզ համար վատ է, ուրիշի համար շատ լաւ է. ինչոր քեզ համար թոյն է, ուրիշի համար անուշ մեղր է։ Բառերը ոչինչ նշանակութիւն չունին. ես նայում եմ ինձ դիմողների սրտին»։

Տիգրան Ք. Վարդանեանց

ԳԱՅԼԸ

Լ. Толстой.

Մի փոքրիկ տղայ կար։ Նա շատ էր սիրում վառիկի մի և գայլից էլ շատ վախենում։

Մի երեկոյ այդ փոքրիկ տղան ամեն օրւայ նման անկողին է մտնում. գլուխը բարձին դնելուն պէս քունը տանում է։ Տղան երազում տեսնում է, որ ինքը, իբրև թէ, անտառի միջով գնում է սունկ քաղելու և մեկել յանկարծ տեսնում է որ մի գայլ է դուրս գալիս իրա դիմացից, թփերի միջից, և վրան յարձակւում։

«Վայ, վայ...—վախեցած ձայն է տալիս տղան,—սա ուզում է ինձ ուտի»։

—Ո՛չ,—ասում է գայլը մարդկային լեզուով,—ես քեզ չեմ ուտիլ, այլ հեռո գլոյց կանեմ։

Իսկ տղան երկիւղից սկսում է դողալ։

—Դու վախենում ես որ քեզ կուտեմ,—ասում է գայլը, բա դու ինքդ ինչ ես անում, միևնոյնը չէս անում։ Սիրում ես վառիկներին։

—Այո, սիրում եմ, վախվախելով ասում է տղան։

—Եթէ որ սիրում ես, հապա ինչու ես նրանց ուտում,—ասում է գայլը։ Չէ՞որ վառիկներն էլ նոյնպիսի կենդան արարածներ են, ինչպիսին որ դու ինքդ ես... Դէ մէկ տեսնենք գնա մտիկ տուր, տես թէ ինչպէս

են բռնոտում խեղճ վառիկներին, տես թէ խոհարարը ինչպէս է նրանց անմեղ վիզը կարում, իսկ նրանց մայրը ինչպէս է կողմնակում՝—բողոքում, որ իրա ձակուկներին խլում են իրանից...

—Դէ, ասա՝ դու տեսե՞լ ես այդ ամենը, հարցնում է գայլը։

Ո՛չ, չեմ տեսել, հազիւ լսելի ձայնով ասում է տղան։

—Չես տեսել հա... Դէ ուրեմն հիմա տես, թէ ինչպէս եմ ուտում քեզ։ Որովհետև դու էլ ինձ համար մի վառիկ ես, ես էլ քեզ պէտք է ուտեմ։

Այդ ասում է գայլը և յարձակւում է փոքրիկ տղայի վրայ, որ ուտի։ Իսկ տղան լեզուատատ եղած՝ այնպէս բարձր ձայնով աղաղակում է,

«Վայ, վայ... սա ինձ ուտում է», որ զարմնում է ինքն իրա ձայնից։

Ահա այդ օրւանից սկսած այդ տղան ձեռք է վերցնում մսեղէն ուտելուց. նա ո՛չ-միայն էլ չի ուտում հաւի միս, որ այնպէս շատ էր սիրում, այլ նա չի ուտում նաև ո՛չ տաւարի և ո՛չ էլ ոչխարի միս։ **Լեւոն Մ.-Սեդ.**

Bullfinch

ԱՌԱԿ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Л. Толстой.

(Իր մօտ հաւաքուած գիւղացիներին անձամբ ասաց)

Հեռու աշխարհում ապրում էր մի թագաւոր։ Նա ծերութեան օրերում հոգով վշտացաւ։—Ա՛հ,—մտում է նա— կեանքումս ամեն բան փորձել եմ և բան չէ մնացել, ինչով մարդու մտածելի է, որ տեսած չըլինեմ։ Միայն մի բան չեմ տեսել։ Աստուծուն չեմ տեսել։ Ուզում եմ նրան տեսնել։ Եւ կանչեց իր մօտ պալատականներին, իմաստուններին և քահանաներին ու ասաց. «Եթէ դուք ցոյց չըտաք ինձ Աստուծուն,—բոլորիդ կը բանտարկեմ և ամենածանր պատժով կը պատժեմ»։ Եւ երեք օր ժամանակ տուաւ։ Ամբողջ ամբոցը սև պատեց, պալատականները դուխները կախ էին դրել և սգաստում էին մտնում։ Երրորդ օրը, երբ ժամանակամիջոցը լրացաւ, ուղիղ կէս օրին, թագաւորը կանչում է նրանց. իշխանները, իմաստուններն և քահանաները մեծային լուծ, և հէնց թագաւորն ուզում էր բերանիցը հրամանը հանել, ահա տեսչ է գալիս չոլից եկած մի հովիւ և գլուխ տալով ասում է.

—Թագաւոր, Թոյլ տուր կամքդ կատարեմ։

—Լաւ, պատասխանեց թագաւորը—բայց տես, գլխովդ պատասխանատու ես։

Եւ հովիւը թագաւորին դուրս բերեց հրապարակ, ցոյց տալով փայլուն արևը, ասաց.

—Նայի՛ր։

Թագաւորը գլուխը բարձրացրեց, ուզում էր նայել, բայց արևի լոյսը աչքերը ծակծկոտեցին և նա գլուխը քաշ դրեց և աչքերը հուզ կալաւ։

—Ի՞նչ է, ասում է հովիւին, ուզում ես որ քոռանամ։

—Թագաւոր,—ասաց հովիւը. այս Տէրոջ միայն մի տեղ-

ծագործութիւնն է։ Նրա մեծութեան միայն մի նշոյլը, Աստուծոյ վառուող խարոյկի միայն մի անկիւնը. ինչպէս է որ դու ուզում ես մօտենալ նրան և տեսնել քո թոյլ և թաց աչքերով։ Գնա, որոնիր Աստուածուն և տես նրան ուրիշ աչքերով։

Այդ բանը թագաւորին դիւր եկաւ, ասաց հովւին։

Տեսնում եմ, որ դու խելօք մարդ ես և գնահատում եմ հոգուդ կարողութիւնը։ Իմ այս հարցին էլ պատասխան տուր. Աստուած առաջ ինչ էր։

Հովիւը մտածեց և պատասխանեց.

—Խնդրում եմ, թագաւոր, միայն մի չարանալ, համբերիր։

Թագաւորը սկսեց.

—Մէկ, երկու...

Ո՛չ, ո՛չ—ընդհատեց հովիւը, այդպէս չէ, մէկից առաջ սկսիր։

—Ինչպէս թէ՞ մէկից առաջ, մէկից առաջ ոչինչ չըկայ։

—Խելօք խօսք ասացիր, թագաւոր։ Եւ Աստուածնից առաջ էլ ոչինչ չէ եղել։

Թագաւորին շատ դիւր եկաւ հովւի խօսքերը. ապա ասաց հովւին։

—Քեզ մեծ դանձ կըտամ։ Միայն իմ երրորդ հարցին էլ պատասխան տուր։

Ի՞նչ է անում Աստուած։

Հովիւը նկատում է, որ թագաւորի սիրտը մի քիչ կակղել է։

—Լաւ, ասում է, այդ հարցին պատասխան կըտամ, միայն իմ խնդիրը կատարիր։ Մի առժամանակ հագուստներս փոխենք։

Եւ թագաւորը հանեց իր թագաւորական զգեստը և հագցրեց հովւին, իսկ ինքը հագաւ հովւի կապան և հովուական քիսան առաւ ձեռը։

Եւ հովիւը գահ բարձրացաւ, վերցրաւ թագաւորական կաւազանը և ցոյց տուաւ գահի ներքևում կանգնած դահնակը ձեռին կանգնած թագաւորին։

Ահա, ինչ է անում տէրը. մէկին թագաւոր է դարձնում, իսկ միւսին հակառակը։

Եւ կրկին հագաւ իր թագաւորական զգեստը։

Մտքի մէջ ընկաւ թագաւորը, իսկ տպաւորուեց հովւի խօսքերը իր սրտում և յանկարծ ուրախացած բացականչեց.

—Այժմ ահա տեսնում եմ Աստուածուն։

Ս. Բարուրչի.

Ռուս գիւղացիներին հաց է բաժանւում.



ԱՍՏՈՒԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՈՒՆԸ ՏԵՄՆՈՒՄ Է ԲԱՑԻ ԶՈՒՏ ՉԷ ՑԱՑՏՆՈՒՄ

Левъ Толстой.

Վլադիմիրը քաղաքում ապրում էր երիտասարդ վաճառական Աքսեօնովը։ Նա ուներ երկու խանութ և մի տուն։

Աքսեօնովը շէկ ու գանգուր մազերով, գեղեցիկ, ուրախ ու լաւ երգող մի երիտասարդ էր։ Առաջ նա արբեցողութեամբ շատ էր պարապում և խմած ժամանակը յանդուգն էր, բայց ամուսնանալուց յետոյ թողել էր արբեցողութիւնը և միայն երբեմն երբեմն էր խմում։

Մի անգամ, ամառ ժամանակ, Աքսեօնովը ուզում էր Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը գնալ։ Իր ընտանիքին մնաս բարև տալու ժամանակ՝ կինը ասաց նրան.

—Իվան, այսօր մի ճանապարհ իջիր, ես քեզ համար վատ երազ եմ տեսել։

Աքսեօնովը ծիծաղեց ու ասաց.

—Դու միշտ վախենում ես, որ չըլինի թէ էլի խմեմ ու արբեմ տօնավաճառում։

Կինը ասաց.

—Ինքս էլ չըգիտեմ, թէ ինչի եմ վախենում, բայց մի այնպիսի վատ երազ եմ տեսել որ... Երազումս տեսայ, որ իբր թէ դու վերադառնում ես քաղաքից, գլխարկդ

վերցնում ես, և ես նայում ու տեսնում եմ որ գլխիդ մազերը բոլորովին սպիտակել են։

Աքսեօնովը ծիծաղեց.

—Ուրեմն ես օգուտ կունենամ։ Տես, ինչպէս առուտուր կանեմ, ինչպիսի թանկագին ընծաներ կըբերեմ քեզ համար։

Նա մնաս բարև ասաց իր ընտանիքին ու ճանապարհ ընկաւ։

Կէս ճանապարհին նա պատահեց մի ծանօթ վաճառականի և նրա հետ իջաւ միասին պիշերելու։ Նրանք միասին թէյ խմեցին և պառկեցին քնելու երկու իրար կից սենեակներում։ Աքսեօնովը երկար քնել չէր սիրում, նա կէս գիշերին զարթնեց, վեր կացրեց կառապանին և հրամայեց լծել կառքը, որ առաւօտեան հովին հեշտ գնայ ճանապարհը։ Յետոյ դուրս եկաւ, հաշիւ տեսաւ պանդոկապետի հետ ու ճանապարհ ընկաւ։

Քառասուն վերստի չափ ճանապարհ կտրելուց յետոյ, նա կրկին կանգնեցրեց կառքը մի պանդոկի առաջ, որ ձիերը կերակրեն, ինքն էլ մի փոքր հանգստացաւ, իսկ ճաշին դուրս եկաւ պատշգամբը, հրամայեց, որ հեշտաեռը դնեն, յետոյ կլիճառը հանեց ու սկսեց նւագել։ Յանկարծ պանդոկին մօտենում է մի փոստի սայլակ, որի մէջից դուրս է գալիս մի աստիճանաւոր, երկու գինուորների հետ, և մօտենալով Աքսեօնովին՝ հարց ու փորձ է անում, թէ նա ոմն է կամ ոըտեղից է։ Աքսեօնովը բոլորը, ինչպէս կար, պատմեց և հրաւիրեց նրան թէյի։ Բայց աստիճանաւորը շարունակում էր հարց ու փորձը, թէ, արդեօք, նա—Աքսեօնովը ոըտեղ է քնել անցեալ գիշեր. մենակ, թէ վաճառականի հետ. առաւօտը նա տեսաւ վաճառականին. ինչի ինքը այդպէս շուտ դուրս եկաւ իջևանից և այլն։

Աքսեօնովը զարմացաւ, թէ ինչի նրան այդպէս հարց ու փորձ են անում. բոլորը, ինչպէս կար, պատմելուց յետոյ՝ նա հարցրեց աստիճանաւորին.

—Ինչի էք դուք այդպէս ինձ հարց ու փորձ անում, ես գող չեմ, աւազակ չեմ, գնում եմ իմ գործին, և աւելորդ է ինձ հարց ու փորձ անելը։

Այն ժամանակ աստիճանաւորը ձայն տւեց պինւորներին և ասաց.

—Ես ոստիկան եմ և քեզ հարց ու փորձ եմ անում այն պատճառով, որ այն վաճառականը, որի հետ դու գիշերը անց ես կացրել, սպանւել է. ցոյց տուր իրեղէններդ, իսկ դուք խուզարկեցէք սրան։

Զինւորները ներս մտան խրճիթը, վերցրին նրա պայուսակն ու պարկը, բայց արին և սկսեցին քրքրել։ Յանկարծ ոստիկանը պարկից հանեց մի դանակ և բղաւեց.

—Այս ո՞ւմ դանակն է։

Աքսեօնովը՝ տեսնելով, որ արիւնոտ դանակը իր պարկից հանեցին, վախեցաւ։

—Ինչի դանակը արիւնոտ է։

Աքսեօնովը կամենում էր պատասխանել, բայց լեզուն կապւեց, մի խօսք անգամ չկարողացաւ ասել։

—Ես... ես չը գիտեմ...ես...դանակը...ես...իմը...չէ...

Այդ ժամանակ ոստիկանը ասաց.

—Առաւօտը վաճառականին անկողնում սպանւած են գտել. բացի քեզանից՝ ուրիշ ոչոք չէր կարող այդ բանն անել, խրճիթը ներսից կողպած է եղել և խրճիթում բացի քեզ ոչոք չի եղել։ Ահա արիւնոտ դանակն էլ քո պարկումն է, նոյն իսկ դէմքիցդ էլ երևում է, որ դու ես յանցաւորը։ Ուրեմն ասա, ինչպէս դու սպանեցիր նրան և ինչքան փող կողոպտեցիր։

Աքսեօնովը երդւում էր, որ ինքը չի արել այդ բանը, որ թէչ խմելուց յետոյ վաճառականին էլ չի տեսել, որ իր մօտ միայն իր 8000 րուբլին է, որ դանակը իրանը չի։ Բայց նրա ձայնը խեղդւում էր, դէմքը գունատ էր, և վախից դողում էր, ինչպէս մի յանցաւոր։

Ոստիկանը կանչեց պինւորներին և հրամայեց որ նրան կապեն ու տանեն դնեն սայլի վրայ։ Երբ ոտները կապած

Աքսեօնովին գցեցին սայլի վրայ, նա երեսը խաչակնքեց ու լաց եղաւ։ Աքսեօնովի իրեղէնները և փողը ձեռքիցն առան, իսկ իրան ուղարկեցին մօտակայ քաղաքի բանտը։ Մարդ ուղարկեցին Վլադիմիր քաղաքը իմանալու համար, թէ ինչպիսի մարդ է Աքսեօնովը։ Վլադիմիրի բոլոր վաճառականները և բնակիչները ասացին, որ Աքսեօնովը արդար խմում և արբում էր, բայց առհասարակ լաւ մարդ էր։ Յետոյ նրան դատի ենթարկեցին. նրան մեղադրում էին, թէ վաճառականին սպանելու և նրա 20,000 րուբլին կողոպտելու համար։

Կինը շատ էր տրտնջում ամուսնու համար և չգիտէր թէ ինչ անի։ Նրա երեխաները դեռ փոքր էին, մէկն էլ ծծկեր էր։

Նա բոլոր երեխաներին հետն առաւ և գնաց այն քաղաքը, որտեղ նրա ամուսինը բանտարկուած էր։ Սկզբում կնոջը ներս չէին թողնում, բայց յետոյ նա խնդրեց մեծաւորներին, և նրան տարան իր մարդու մօտ։ Երբ նա իր մարդուն տեսաւ կալանաւորի հագուստով, ոտները շղթայած, աւազակների հետ միասին,—ուշագնաց ընկաւ գետնին և երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ։ Յետոյ երեխաներին իր շուրջը հաւաքելով՝ նա նստեց ամուսնու մօտ և սկսեց պատմել նրան տան գործերից և ապա մարդուն հարցրեց այն բոլորի մասին, ինչ որ անցել էր նրա գլխովը։ Մարդը ամեն բան պատմեց նրան։ Կինն ասաց.

Հիմա ինչ անենք։

Մարդն ասաց.

—Պէտք է թագաւորին խնդիրք տալ։ Հօ չի՛ կարելի որ մարդ անմեղ տեղը կորչի։

Կինն ասաց, որ ինքը արդէն խնդիրք է տւել թագաւորին, բայց խնդիրքը տեղ չի հասել։ Աքսեօնովը ոչինչ չասաց և միայն գլուխը կախեց։ Այդ ժամանակ կինն ասաց.

—Ես զուր չէի այն ժամանակը, յիշո՞ւմ ես, երազումս

տեսել, որ քո մազերը սպիտակել են։ Ճիշտ որ վշտից դու ծերացել ես արդէն։ Ա՛խ, երանի թէ այն ժամանակը չըգնայիր...

Ապա նա սկսեց մատներով ջոկ-ջոկել մարդու մազերը և ասաց.

—Վանեա, սրտագին բարեկամ, ճշմարիտն ասա կնոջդ, հօ դու՛ չես սրել այդ բանը։

—Դու էլ ես ինձ վրայ կարծիք տանում, ասաց Աքսեօնովը և ձեռքերով երեսը ծածկեց ու լաց եղաւ։ Այս միջոցին մի վինուր ներս մտաւ և ասաց, որ կինը իր երեխաներով դուրս գնաւ։ Այսպէս Աքսեօնովը վերջին հրաժեշտ աւեց իր ընտանիքին։ Երբ կինը դուրս գնաց, Աքսեօնովը սկսեց մտաբերել այն բոլորը, ինչ որ իրանք խօսել էին։ Երբ նա յիշեց, որ կինն էլ է կասկածում իր վրայ, ինքն իրան ասաց. «Երևի՝ բացի Աստուծուց՝ ոչոք չի կարող իմանայ իմ արդար լինելը, և միայն նրան պէտք է ապաչել և նրանից միայն յուսալ ողորմութիւն»։ Դրանից յետոյ Աքսեօնովը էլ խնդիրք չէր տալիս. նա յոյսը կարեց և միայն Աստուծուն էր աղօթում։

Աքսեօնովին դատապարտեցին մտրակով ծեծելու և յետոյ Սիբիր, տաժանակիր աշխատանքի ուղարկելու։ Այսպէս էլ արին, նրան մտրակով ծեծեցին և յետոյ, երբ վէրքերը առողջացան, միւս տաժանակիրների հետ Սիբիր քշեցին։

Սիբիրում Աքսեօնովը քսանուվեց տարի տարաւ տաժանակիր աշխատանքների մէջ։ Նրա գլխի մազերը ձնի նման սպիտակեցին, նեղ ու երկար միրուքը նոյնպէս սպիտակեց։ Նա կորցրեց իր ուրախութիւնը, մէջքը կորացաւ, սկսեց ծանր մանգալ. քիչ էր խօսում, երբէք չէր ծիծաղում, այլ միշտ աղօթում էր։

Բանտում Աքսեօնովը կօշկակարութիւն սովորեց և աշխատած փողով մի աղօթատիրք գնեց, որ կարդում էր բանտում լոյս եղած ժամանակ, իսկ տօն օրերին գնում էր բանտի եկեղեցին, գիրք էր կարդում կամ դասում

կանգնած երգում էր,—նրա ձայնը դեռ ևս լաւ էր։ Բանտի կառավարիչը սիրում էր Աքսեօնովին նրա խոնարհութեան համար, իսկ բանտարկեալ ընկերները յարգում էին նրան և «պապա» էին անւանում կամ «Այր Աստուծոյ»։ Երբ ուզում էին որ և է բան խնդրել վարչութիւնից, ընկերները միշտ Աքսեօնովին էին ուղարկում խնդրելու, և երբ տաժանագիրների մէջ վէճեր էին լինում, նրանք Աքսեօնովի ժօտ էին գալիս որ նա դատէ։

Ծանից ոչոք նամակ չէր գրում Աքսեօնովին, և նա չգիտէր, թէ կինը և որդիքը կենդանի են թէ ոչ։

Մի անգամ նոր կալանաւորներ բերին։ Երեկոյեան բոլոր հին կալանաւորները շրջապատեցին նորերին և սկսեցին հարց ու փորձ անել, թէ ով ո՞ր քաղաքից կամ գիւղից է և ի՞նչ գործի համար է պատժւել։ Աքսեօնովը նոյնպէս նստեց թախտի վրայ, նորերի մօտ, և գլուխն կախած լսում էր, թէ ով ինչ է պատմում։

Նոր կալանաւորներից մէկը վաթսուն տարեկանի մօտ, բարձրահասակ, առոյգ մի ծերունի էր, սպիտակ, խնամած մի բուքով. նա պատմում էր թէ ինչի համար են իրան պատժել։ Նա ասում էր.

—Այսպէս, եղբայրներ, ես իզուր ընկայ այստեղ։ Կառապանի ձին արձակեցի սահնակից, բռնեցին ինձ և ասում են, թէ գողացել ես։ Իսկ ես պատասխանեցի, թէ ձին չեմ գողացել, ուզում էի միայն շուտ տեղ հասնել ձիով,- ձին յետոյ բաց եմ թողել. կառապանն էլ հօ իմ բարեկամն է։ Ասում եմ—այս օրէնք է որ ինձ բռնում էք,—Ո՛չ, ասում են, բայց չգիտեն թէ ո՞րտեղից ինչ եմ գողացել։ Բաներ եղել են, և ես վաղուց պէտք էր այստեղ ընկած լինէի, բայց չէին կարողանում հաստատել, իսկ հիմա անարդար կերպով ինձ այստեղ քշեցին։

Ի՛հ, ինչ թագցնեմ. Սիբիրում եղել եմ, բայց երկար չեմ մնացել։

—Ինքդ ո՞րտեղացի ես, հարցրեց կալանաւորներից մէկը։

—Ես Վլադիմիր քաղաքից եմ, անունս Մակար է, հօրս անունը Սիմոն։

Աքսեօնովը գլուխը բարձրացրեց և հարցրեց.

—Բարեկամ, չե՞ս լսել Վլադիմիր քաղաքում Աքսեօնով վաճառականների մասին, կենդանի՞ են, թէ չէ։

—Ինչպէս չէ, լսել եմ. հարուստ վաճառականներ են, միայն հայրը Սիբիրումն է։ Երևի նա էլ նոյնպէս մեղաւոր է, ինչպէս մենք։ Իսկ դու, ծերուկ, ինչ բանի համար ես պատժւած։

Աքսեօնովը չէր սիրում իր դժբախտութեան մասին խօսել. նա հառաչեց և ասաց.

—Իմ մեղքերի համար. ահա քսանվեցերորդ տարին է, որ տաժանակիր աշխատանքի մէջ եմ։

Մակարն ասաց.

—Ի՞նչ տեսակ մեղքերի համար։

Աքսեօնովն ասաց.

—Ուրեմն արժանի էի, որ պատժեցին,—և էլ ուրիշ ոչինչ չէր ցանկանում պատմել, բայց միւս բանտարկեալ ընկերները պատմեցին նորեկին, թէ ինչէս է Աքսեօնովը Սիբիր ընկել։ Նրանք պատմեցին, որ ճանապարհին մի ինչ որ մարդ սպանել է մի վաճառականի և դանակը ծածուկ դրել Աքսեօնովի պարկում. այդ պատճառով էլ նրան զուր տեղը դատապարտել են։

Երբ Մակարը այս բանը լսեց, նայեց Աքսեօնովի վրայ, ձեռներով խփեց ծնկներին և ասաց.

—Բայց զարմանալի է, շատ զարմանալի։ Ինչպէ՞ս ծերացել ես։

Սկսեցին հարց ու փորձ անել նրան, թէ ինչի զարմացաւ և որտեղ է նա տեսել Աքսեօնովին։ Բայց Մակարը չըպատասխանեց և միայն ասաց.

—Զարմանալի է, տղերք, տեսէք, որտեղ ենք մենք պատահում հա՜։

Այդ խօսքերի վրայ Աքսեօնովը մտածեց. թէ գուցէ այս մարդը ճանաչում է, թէ ո՞վ է սպանել այն վաճառականին։ Նա հարցրեց.

—Մակար—եղբայր, դու այդ գործի մասին մի բան լսել ես, թէ՛ ինձ առաջ տեսել ես։

—Ինչպէս չեմ լսել, ամբողջ աշխարհը գիտէր։ Բայց, բայց դա վաղուց է պատահել, լաւծս էլ մոռացել եմ,— ասաց Մակարը։

—Կարելի է լաւծ լինես, ով է վաճառականին սպանել,—հարցրեց Աքսեօնովը։

Մակարը ծիծաղելով ասաց.

—Երևի նա է սպանել, ում պարկից դանակը հանել են։ Եթէ մի ուրիշն է սպանել ու յետոյ դանակը ծածուկ դրել պարկիդ մէջ ու չի բռնուել, ուրեմն նա գող չէ։ Բայց՝ ինչպէս կարելի է, որ դանակը պարկիդ մէջ դնէին. չէ՞ որ պարկդ դխիդ մօտ էր դրած. դնելու ժամանակ դու կարթնանայիր և կիմանայիր։

Աքսեօնովը այս խօսքերը լսեց թէ չէ, մտածեց որ այս մարդն է վաճառականին սպանողը. նա վեր կացաւ տեղիցը և հեռացաւ։ Այդ ամբողջ գիշերը Աքսեօնովը չըկարողացաւ քնել։ Նա տխուր մտածմունքների մէջ էր ընկել. կամ կինն էր նրա աչքին երևում, հէնց այնպէս, ինչպէս որ նա վերջին անգամ իրան դէպի ծովնավաճառ ճանապարհ դնելու ժամանակն էր։ Կարծես թէ կինը կենդանի կանգնած լինէր նրա առաջ. նա տեսնում էր նրա երեսը, աչքերը, լսում էր նրա ձայնը, կարծում էր թէ նա իր հետ խօսում ու ծիծաղում է. կամ երեխաներին էր յիշում—այնպէս, ինչպէս որ նրանք այն ժամանակն էին—դեռ փոքր, մէկը մուշտակ հագած, միւսը ծծկեր։ Իրան էլ յիշեց նա—այնպէս, ինչպէս այն ժամանակն էր—երիտասարդ, ուրախ. յիշեց թէ ինչպէս, իրան կալանաւորելուց առաջ, ինքը նստած պանդոկի պատշգամբին կլիմաո էր նստում և թէ ինչպէս նրա սիրտը այնքան ուրախ էր այն ժամանակ։ Յիշեց և այն տեղը, ուր իրան ծեծեցին, յիշեց և պահեին, և շրջապատած ամբոխին, և կալանաւորներին և շղթաներ, և իր քսանվեց տարուայ տաժանակիր կեանքը, յիշեց և իր ծերութիւնը։ Եւ Աքսե-

օնովն այնպէս սրտանեղուեց, որ քիչ էր մնում ինքնասպանութիւն գործէ։

—«Եւ այս բոլորը այդ չարագործի շնորհիւ», մտածում էր Աքսեօնովը։

Եւ նա այնպէս բարկացաւ Մակարի վրայ, որ ուզում էր վրէժխնդիր լինել, թէկուզ ինքն էլ կորչելու լինէր։ Նա ամբողջ գիշերը ազօթք էր անում, բայց չէր կարողանում հանգստանալ։ Ցերեկով չէր մօտենում Մակարին և չէր էլ նայում նրա վրայ։ Այսպէս անցաւ երկու շաբաթ։ Գիշերները Աքսեօնովը չէր կարողանում քնել, և նրա սիրտը այնպէս էր նեղանում, որ չըզիտէր թէ ինչ անէ։

Մի անգամ գիշերը նա անցնում էր բանտի միջով. այդ միջոցին նա տեսաւ, որ մեկ թախտի տակից հող է դուրս թափւում։ Յանկարծ թախտի տակից դուրս թռաւ Մակարը, այլայլած դէմքով և նայեց Աքսեօնովին։ Աքսեօնովը ուզում էր անցնել գնալ, որ չըտեսնէ նրան, բայց Մակարը նրա ձեռքերը բռնեց և պատմեց, թէ պատի տակ անցք է փորում և հողը՝ իւրաքանչիւր օր կօշիկների ճիթքերի մէջ ածած՝ դուրս է բերում և թափում է փողոցում այն ժամանակը, երբ նրանց տանում են բանեցնելու։ Նա ասաց.

—Հոգիր միայն, ծերուկ, ես քեզ էլ կազատեմ. իսկ եթէ ասես, ինձ կըծեծեն, բայց ես էլ քեզ կենդանի չեմ թողնիլ, կըսպանեմ։

Երբ Աքսեօնովը տեսաւ իրան դժբախտացնող չարագործին, բարկութիւնից ամբողջապէս դողաց և ասաց.

—Ինձ փախչելու հարկ չկայ, կամ էլ իմ ինչս պիտի ապանես, դու ինձ վաղուց ես ապանել։ Իսկ քո արածը կըյայտնեմ, թէ չեմ յայտնիլ, այդ էլ Աստուած գիտէ։

Երբ կալանաւորին միւս օրը դուրս բերին, որ աշխատանքի տանեն, ղեկաւորները նկատեցին, որ Մակարը հող է թափում. ապա բանտում որոնեցին և ծակը գտան։ Կա-

ռավարիչը եկաւ բանտը և սկսեց ամենքին հարց որ փորձ անել, թէ ո՞վ է փորել ծակը։ Ամենքն էլ պատասխանում էին, թէ չըգիտեն, Իմացողներն էլ չըմատնեցին Մակարին, որովհետև գիտէին, որ դրա համար նրան այնքան կըծեծէին, որ կիսամեռ կըդառնար։ Այդ ժամանակ բանտապետը դիմեց Աքսեօնովին. նա գիտէր, որ Աքսեօնովը ճշմարտախօս մարդ է և այդ պատճառով ասաց։

—Ծերո՛ւկ, դու արդար մարդ ես,— ասա՛ ինձ Աստուծոյ առաջ, ո՞վ է այդ ծակը փորել։

Մակարը, կարծես թէ այդ բանից տեղեկութիւն չունէր, կանգնած նայում էր դէպի բանտապետը և ուշք էլ չէր դարձնում Աքսեօնովի վրայ։ Աքսեօնովի ձեռքերն ու շրթունքները դողում էին և նա երկար չէր կարողանում մի խօսք անգամ ասել։ Նա մտածում էր. «Ի՞նչի ծածկեմ, ինչի՞ ներեմ նրան, երբ նա ինձ կորստեան մատնեց։ Թող իմ տանջանքների փոխարէն ինքն էլ պատժւի։ Իսկ եթէ ասեմ—ճշմարիտ որ նրան սաստիկ կըծեծեն։ Բայց կարելի է գուր տեղն եմ կասկածում նրա վրայ, վաճառականին սպանողը գուցէ նա չէ։ Եւ մի՞թէ իմ պրուքիւնը կըթեթեանայ, եթէ ասեմ»

Բանտապետը կրկին հարցրեց,—Դէհ, ծերուկ, ճշմարիտն ասա, ո՞վ է փորել ծակը։

Աքսեօնովը նայեց Մակարի վրայ և ասաց.

—Ես չեմ տեսել և չըգիտեմ։

Հէնց այդպէս էլ չիմացան, թէ ո՞վ է փորել ծակը։

Միւս գիշերը, երբ Աքսեօնովը՝ իր թախտի վրայ պառկած՝ նոր սկսել էր ննջել, նա իմացաւ որ մէկը մօտեցաւ և նստեց իր ոտների մօտ։ Նա նայեց և մթնումը ճանաչեց Մակարին։ Աքսեօնովն ասաց.

—Ի՞նչ ես ուզում ինձանից. ի՞նչ ունիս այստեղ։

Մակարը լուռ մնաց։ Աքսեօնովը վեր կացաւ տեղից և ասաց.

—Ւան-եղբայր, ների՛ր ինձ։

Աքսեօնովն ասաց.—Ի՞նչ ես արել որ քեզ ներեմ։

—Ես եմ վաճառականին սպանել. հէնց դանակն էլ ես եմ քո պարկի մէջ դրել։ Ինձ էլ էի ուզում սպանել, բայց բակումը աղմուկ բարձրացրին, դանակը պարկիդ մէջ դրի և դուրս վազայ պատուհանից։

Աքսեօնովը լուռ էր և չէր գիտէր, թէ ինչ ասէ։ Մակարը թաղից իջաւ, չոքեց Աքսեօնովի առաջ և ասաց.

—Իւան-եղբայր, ներիր ինձ, ներիր ի սէր Աստուծոյ։ Ես կը յայտնեմ, որ ես եմ վաճառականին սպանել,—ինձ կը ներեն, և տուն կը վերադառնաս։

Աքսեօնովն ասաց.

—Հեշտ է ասելը, իսկ ալդ բոլորը տանե՛լը։ Հիմա ես ո՞ւր գնամ։ Կինս վախճանւել է, երեխաներս ինձ մոռացել են. ես էլ գնալու տեղ չունեմ...

Մակարը չէր վեր կենում յատակից, գլուխը ծռնին էր խփում և ասում.

—Իւան-եղբայր, ներիր։ Երբ ինձ մարակով ծեծում էին, ինձ համար այդ բանը աւելի թեթև էր՝ քան թէ հիմա քո երեսին նայելը։ Իսկ դու խնայեցիր ինձ—չըմատնեցիր։ Ներիր ինձ ի սէր Քրիստոսի. ներիր ինձ անիծած չարագործիս։—Եւ նա սկսեց հեկեկալ։

Աքսեօնովը, երբ տեսաւ, որ Մակարը լաց է լինում, ինքն էլ սկսեց լաց լինել և ասաց.

—Թող Աստուած քեզ ների. կարելի է ես հարիւր անգամ քեզանից վատ եմ։

Եւ յանկարծ նա թեթևութիւն զգաց։ Նա այլ ևս ման կարօտը չէր քաշում և էլ չէր ուզում բանտից հեռանալ. այլ միայն իր վերջին ժամի մասին էր մտածում։

Մակարը լըսեց Աքսեօնովին և յայտնեց. վերադարձնալու հրամանը դուրս եկաւ, բայց նա արդէն մեռել էր։

Ջ. Տ. Գ.



Միրեալ ընկերուհուդ մայրենի
Լեւ Տոլստոյ.
1908, 25 Աւգուստ

Տիգրան Յակոբեան Նազարեանին

ԼԵՒ ՏՕԼՍՏՕՅ

1908, 25 օգոստոսի

Լեւ Տօլստոյի ինքնագիր նւէրը թերթիս խմբագրին, որ շնորհեց եամնայա Պօ-լեանում յօբելեանի առիթով նրա այցի օրը։

ԻԼԻԵԱՍ

Левъ Толстой.

Ուֆայի նահանգում ապրում էր մի բաշկիր Իլիեաս անունով, որը հօրից ճնշակել էր աղքատ։ Հայրը միայն ամուսնացրել էր նրան և մի տարուց յետոյ ինքը մեռել։ Այն ժամանակ Իլիեասի ամբողջ կարողութիւնն էր երեք մատակ, երկու կով և երկու տանեակ ոչխար. սակայն նա անտես էր և սկսեց ժողովել. առաւօտից մինչև երեկոյ նա աշխատում էր իր կնոջ հետ, ամենից վաղ էր զարթնում և ամենից ուշ պարկում և տարէցտարի միշտ հարստանում էր։ Այդպէս աշխատանքով ապրեց Իլիեասը 35 տարի և դիզեց մեծ կարողութիւն։

Իլիեասը ունեցաւ 200 գլուխ ձի, 150 գլուխ եղջերաւոր անասուն և 1200 ոչխար։ Ծառանները արածացնում էին Իլիեասի երամակներն ու հօտերը, իսկ աղախինները կթում էին մատակներն ու կովերը և պատրաստում կումիս, իւղ և պանիր։ Նրա տանն ամեն ինչ առատ էր և այն ընդհակառակը ամենքն էլ նախանձում էին Իլիեասի կեանքին։ Մարդիկ ասում էին. «բարգաւոր է Իլիեասը, ամեն ինչ էլ նա շատ ունի, նրան մեռնել էլ հարկաւոր չէ»։ Սկսեցին Իլիեասին ճանաչել լաւ մարդիկ և նրա հետ ծանօթութիւն շարունակել ու գալիս էին նրա հետ հեռու տեղերից։ Իլիեասն ամենքին էլ ընդունում էր, կերակրում ու խմացնում։ Ով էլ գար, ամենքի համար կար կումիս, թէյ, շարբաթ և ոչխարի միս։ Հէնց որ հիւր էր գալիս, իսկոյն մորթում էր մի ոչխար կամ երկուսը, իսկ եթէ հիւրերը շատ էին լինում մորթում էին և մատակ։

Իլիեասն ունէր զաւակներ — երկու աղայ և մի աղջիկ. նա ամուսնացրեց տղաներին և մարդու տւեց աղջկանը։ Երբ նա աղքատ էր, նրա տղաներն աշխատում էին նրա հետ միասին և իրանք էին պահում երամակներն ու

հօտերը. իսկ երբ նրանք հարստացան, տղաները երես առան և նրանցից մէկին սկսեց խմել։ Մէկին—առաջին կըռւում սպանեցին, իսկ միւսին—կրտսերին պատահեց գոռող կին և այդ որդին սկսեց չը լսել հօրը. Իլիեասն էլ էլ ստիպւած եղաւ հեռացնել նրան։

Իլիեասը հեռացրեց նրան, աւեց նրան տուն և անասուն և այդպիսով պակասեց Իլիասի հարստութիւնը։ Դրանից յետոյ շուտով հիւանդութիւն ընկաւ Իլիեասի ոչխարների մէջ և շատը փչացաւ. յետոյ եկաւ սովի տարին—խոտ չեղաւ.—ձմեռը սառկեց շատ անասուն։ Կիրգիզներն էլ շատ բան տարան և Իլիեասի կարողութիւնն սկսեց պակասել և նա սկսեց աւելի ու աւելի ցածանալ, ուժերն էլ պակասեցին և 70 տարեկան ժամանակ Իլիեասն այն տեղը հասաւ, որ սկսեց էժան ծախել քուրքերը, խալիչէք, թամբերը, վրաններբ, յետոյ էլ սկսեց ծախել վերջին անասունը և այդպիսով վերջացաւ Իլիեասը։ Իսկ ինքը չէր տեսնում, որ էլ ոչինչ չը մնաց և ծերութեան հասակում ստիպւած էր գնալ ապրելու ուրիշների մօտ. նրան միայն մնացել էր հազի շորը, քուրքը, գաւակը, կօշիկները և նոյնպէս պառաւ կինը—Շամշէմահին։ Բաժանւած որդին գնաց հեռու աշխարհ, իսկ աղջիկը մեռաւ և այլևս ոչոք չը կար ծերունիներին օգնող։

Ողջաց ծերունիներին նրանց հարևան Մուհամէդշահը։ Նա ինքն էլ ոչ աղքատ էր ոչ հարուստ, այլ ապրում էր միջակ և լաւ մարդ էր։ Ցիշեց նա Իլեասի աղ ու հացը, խղճաց նրա վրայ և ասաց նրան. «Աըի ինձ մօտ, Իլիեաս, պառաւիդ հետ և ապրիր. ամառը ոյժդ ներածին չափ աշխատիր իմ պարտեզներում, իսկ ձմեռը անասունները կերակրիր, իսկ Շամշէմահին թող մատակները կթի և կումիս պատրաստի։ Ձեզ երկուսիդ էլ կը կերակրեմ ու կը հագցնեմ, իսկ ինչ հարկաւոր է ձեզ, դուք ասացէք, ես կը տամ»։ Շնորհակալութիւն յայտնեց Իլիեասը հարևանին և կնոջ հետ սկսեց ապրել Մուհամէդշահի մօտ ինչպէս ծառայ։ Սկզբում ծանր էր թւում, բայց յետոյ վարժւեցին ծերունիները և սկսեցին այդպէս ապրել և ոյժը ներածի չափ աշխատել։

Նրանց սիրոյը ձեռնտու էր պահել այդպիսի մարդկանց, քանի որ ծերունիք իրանք էլ երբեմն աէր էին եղել և բոլոր կարգերն լմանում էին ու չէին ծուլանում, իրանց ուժի չափ աշխատում էին. միայն ցաւալի էր

Մուհամէդշահի համար տեսնել, որ այդպիսի բարձր մարդիկ այդքան ցած ստորճանի էին եղել։

Մի անգամ էլ Մուհամէդշահի մօտ հեռու տեղից խնամախօս հիւրերը էին եկել, նրանց հետ էլ մօլլան։ Մուհամէդշահը հրամայեց բռնել ոչխար և մորթել. Իլիեասը եփեց և ուղարկեց հիւրերին։ Նրանք կերան ոչխարը, խմեցին թէյ և վերցրին կումիսը։ Հիւրերը նստած էին տանտիրոջ հետ մխաին ադամազէ բարձերի վրայ, գորգերի վրայ, խմում էին կումիս և զրոյց անում, իսկ Իլիեասը բանի էր և անցաւ դրան մօտից։ Մուհամէդշահը տեսաւ նրան և ասաց հիւրին. «Տեսնում ես այդ ծերուկին, որն անցաւ դրան մօտով».—«Տեսայ, ասում է հիւրը, ինչ զարմանալու բան կայ նրա մէջ».—«Զարմանալուն այն է, որ նա մեր առաջին հարուստն էր—անունը Իլիեաս, դուցէ դու լսել ես»։—«Ինչպէս չեմ լսել, ասում է հիւրը, թէև չեմ տեսել, բայց նրա համբաւը հեռու է տարածւել»։

—«Հիմա նա ոչինչ չունի և ապրում է ինձ մօտ ծառայ, իր պառաւն էլ հետն է և մատակներն է կթում»։

Զարմացաւ հիւրը, գլուխը շարժեց և ասաց.—«Այո, երևում է որ բաղդը գլորւում է ինչպէս անիւ, մէկին վեր է բարձրացնում, մէկին ցած իջեցնում։ Ինչպէս է, ասում է հիւրը, շո՞ւտ է տխրում ծերունին»։

—Ով է նրան հասկանում, ապրում է հանդարտ, համեստ, աշխատում է լաւ»։ Հիւրն ասում է. «իսկ կարելի՞ է խօսել նրա հետ. հարց ու փորձ անել նրան իր կեանքի մասին»։

—«Ինչու չէ, կարելի է, ասում է տանտէրը և ձայն տալիս վրանից.—«Բաբի՛, ներս արի, կումիս խմիր, պառաւիդ էլ կանչիր»։ Ես Իլիեասը դալիս է կնոջ հետ։ Նա բարևում է հիւրերին և տանտիրոջը, կարդում է աղօթքը և ծալապատիկ նստում դրան մօտ. իսկ նրա կինը անցնում է վարագոյրի յետևը և նստում տանտիրոնց մօտ։

Իլիասին մի գաւաթ կումիս տւին։ Նա ողջունեց հիւրերին և տանտիրոջը, գլուխ տւեց, մի քիչ խմեց և ցած դրեց.—«Իսկ ի՞նչպէս է, պապի, ասաց նրան հիւրը, տխո՞ւր է չէ՞ քեզ համար երբ նայում ես մեզ վրայ, քո նախկին կեանքդ ես յիշում, թէ ինչպէս բաղդաւոր էիր դու և ինչպէս այժմ դառն ես ապրում»։

Ծպտած Իլիասը և ասաց. «Եթէ ես քեզ պատմեմ

բաղդաւորութեան և դժբաղդութեան մասին, դու չես հաւատա—աւելի լաւ է հարցրու իմ պառաւին. նրա ինչ որ սբառնմն է, նոյնը և լեզւի վրայ է, քեզ նա այդ բանի մասին ամեն ինչ ճիշտը կասի»։ Ե՞ւ հիւրը հարցնում է վարագոյրի յետևից. «Ի՞նչպէս է, տատի ասա, ինչ կարծիքի ես նախկին բաղդաւորութեանը և այժմեան դժբաղտութեանդ մասին».—Եւ ասում է Շամշեմահին վարագոյրի յետևից. —«Անա թէ ինչ կարծիքի եմ. ես ու ծերուկը ապրեցինք 50 տարի, բաղդ վնտռեցինք և չը գտանք, իսկ այժմ ահա երկրորդ տարին է, որ էլ մենք ոչինչ չունենք և ծառայումենք, մենք իսկական բաղդաւորութիւնը գտանք և ուրիշ ոչինչ մեզ չէ հարկաւոր։

Զարմացան հիւրերը, զարմացաւ և տանտէրը, նոյն իսկ վերկացաւ, յետ քաշեց վարագոյրը, որ տեսնէ պառաւին. իսկ պառաւը կանգնած էր, ձեռքերը ծալած և ժպտում էր և կրկին անգամ ասաց. «Ես ճշմարիտ եմ ասում, կատակ չեմ անում. կէս դար բաղդ որոնեցինք և քանի որ հարուստ էինք երբէք չը գտանք. այժմ ոչինչ չէ մնացել, գնացինք ուրիշների մօտ ապրելու և այնպիսի բաղդաւորութիւն գտանք, որ դրանից լաւ բան հարկաւոր չէ»։

—«Բայց ինչո՞ւմն է այժմ ձեր բաղդաւորութիւնը»։

—«Անա թէ ինչում. երբ մենք հարուստ էինք, ես և ծերունին մի ժամ հանգիստ չունէինք ոչ ղրուցելու, ոչ հոգու մասին մտածելու և ոչ էլ Աստծուն աղօթելու համար։ Ողբաձն հոգսեր ունէինք մենք. կամ հիւրեր էին լինում մեզ մօտ,—հոգս էր, թէ ում ինչով հիւրասիրենք, ինչ ընծայենք, որ մեզ չը դատապարտէին. կամ հիւրերն են գնում, ծառաներին ենք հսկում,,—նրանք յարմար ժամանակ են որոնում հանդստանալու և աւելի լաւ ուտելու, իսկ մենք նայում ենք, որ մերը չը փչանայ—մեղանչում ենք։ Կամ հոգս է, չը լինի թէ գայլը պատուէ քուռակին կամ հորթին կամ գոզերը բան չը տանեն։ Պարկում ես —քունդ չի տանում—չը լինի թէ ոչխարները արօրեն դատներին։ Գնում ես, մանգալիս դիշերը. հաղիւ հանդստանում ես—կրկին հոգս է, թէ ինչպէս ձմեռայ պաշար հաւաքես։ Բացի դրանից, համաձայնութիւն էլ չը կար իմ և ծերուկի մէջ. նա ասում է այսպէս պէտք է անել, իսկ ես ասում եմ այնպէս և սկսում ենք կռւել, մեղանչումենք։ Այդպէս ապրեցինք մենք մի հոգսից ընկնելով

միւսի մէջ, մի մեղքից միւսը և չը տեսանք բաղդատոր կեանք»։

—«Դէհ, իսկ այժմ».

—«Այժմ ես ու ծերունին զարթուեցանք, զրոյց անում միշտ սիրով ու համաձայն միմեանց հետ, վիճելու բան չունենք, հոգսի բան չը կայ, մեր միակ հոգսն է, որ ութրոջը ծառայենք։ Աշխատում ենք այժմ չափ, աշխատում ենք սիրով, այնպէս որ ութրոջը ոչ թէ ձնաս, այլ օգուտ լինի։ Գալիս ենք—ճաշ կայ, ընթրիք կայ, կումիս կայ։ Եթէ ցուրտ է—ածար կայ տաքանալու, քուրք ևս կայ։ Նոյնպէս ժամանակ կայ թէ զրոյց անելու, թէ հոգու մասին մտածելու և թէ Աստծուն աղօթելու։ Յիսուն տարի բաղդ որոնեցինք այժմ միայն գտանք»։

Հիւրերը ծիծաղեցին։

Իսկ Իլիեասն ասաց. «Մի ծիծաղէք, եղբայրներ, դա հանաք բան չէ, այլ մարգկային կեանք։ Եւ ես ու պառաւը յիմար էինք առաջ և լալիս էինք, որ հարստութիւնը կորցրինք, իսկ այժմ Աստուած ցոյց տւեց մեզ ճշմարտութիւնը և մենք ոչ թէ մեր բաւականութեան այլ ձեր բարիքի համար այս պարզեցինք»։

Մօլլան ասաց. «Դա խելօք խօսք է և Իլիեասը բոլոր սիրվին ճշմարիտ ասաց, դա գրքում էլ գրած է»։

Եւ հիւրերը դաղարեցին ծիծաղել ու մտածեցին։

Ախօնեան

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ՅԱՂԹՈՂ Է

Հին ժամանակ ապրում էր մի բարի մարդ, սա հարուստ էր ամեն բանով և ունէր շատ ստրուկներ։ Սրանք միշտ պարծենում էին իրենց տիրոջով և ասում էին. «Աշխարհում չկայ նրանից լաւ մարդ. նա մեզ թէ կերակրում է և թէ լաւ հագցնում, բանեցնում է մեր ուժից ոչ աւելի, ոչորի խօսքով չէ վիրաւորում, ոչ մէկին չարութիւն չէ անում, ինչպէս միւս տէրերը, որոնք իրենց ստրուկներին անասունից աւելի են չարչարում և տեղի թէ անտեղի պատժում ու մի լաւ խօսք չեն ասում։ Մեր տէրը մեր լաւն է ուզում, մեզ լաւութիւն է անում և լաւ խրատ տալիս. մենք սրանից էլ աւելի ապրուստ չենք ուզում»։

Այդպէս պարծենում էին ստրուկները իրանց տիրոջով։ Եւ ահա չար սատանան նախանձեց, որ այդպէս սիրով են ապրում ստրուկներն իրենց տիրոջ հետ։ Նա մոլորեցրեց նրա ստրուկներից մէկին—Ալէքին և հրամայեց նրան զրդել միւս ստրուկներին էլ։ Եւ երբ բոլոր ստրուկները հանգստանում էին և գովաբանում իրենց տիրոջը, Ալէքը ձայնը բարձրացրեց և ասաց. «Իզուր էք գուք, եղբայրներ, պարծենում մեր տիրոջ բարութեամբ։ Եթէ սատանայի կամքն էլ կատարէք, նա էլ բարի կըլինի։ Մենք մեր տիրոջ լաւ ենք ծառայում, ամեն կերպ նրա կամքը կատարում ենք։ Չէնց որ մի բան անցնում է նրա մտքով, մենք իսկոյն հասկանում ենք և

կատարում։ Եւ ինչպէս նա մեզ հետ բարի չը լինի։ Իսկ եթէ նրա կամքը չը կատարենք և վատութիւն անենք նրան, նա էլ ուրիշների նման, ամենաչար տէրերի պէս վատութեան պէմ վատութիւն կանի մեզ»։ Եւ ահա սկսեցին միւս ստրուկները վիճել Ալէքի հետ և դրազ եկան։ Ալէքը չանձն առաւ բարկացնել տիրոջն այն պայմանով, որ եթէ նա չը կարողանայ բարկացնել —զրկւի իր ծննական հոգուտից, իսկ եթէ բարկացնի— միւսները խոստանում էին տալ նրան իրենց ծննական հոգուտները և, բացի դրանից, խօսք էին տալիս պաշտպանել նրան, եթէ նրան չղթայակապ անէին, կամ ազատէին,—եթէ նրան բանտ չը նէին։ Այդպէս դրազ եկան և Ալէքը խոստացաւ առաւօտը բարկացնել տիրոջը,

Ալէքը ծառայում էր ոչխարների վարպետում, պահում էր լաւ ցեղի ոչխարները։ Եւ ահա առաւօտեան գալիս է բարի տէրն իր հիւրերի հետ վարպետը և սկսում է ցոյց տալ նրանց իր սիրած թանկագին ոչխարները. այդ ժամանակ աչքով է անում սատանայի ծառան իր ընկերներին. «տեսէք, հիմա կը բարկացնեմ մեր տիրոջը»։ Հաւաքւում են բոլոր ստրուկները, նայում են դռներից և ցանկապատից, իսկ սատանան բարձրանում է ծառը և այնտեղից նայում է դէպի բազը, թէ ինչպէս է ծառայելու իրան նրա բանուորը։ Շրջեց տէրը գառներն ու ոչխարները և ուղեց ցոյց տալ իր ամենալաւ ոչխարը։ «Միւս ոչխարներն էլ լաւ են, ասում է նա, իսկ այն ոլորած պոզերով ոչխարը գին չունի. ինձ համար նա աչքիցս աւելի թանկագին է»։ Մարդկանցից խրտնում էին ոչխարները ու գառները և հիւրերը չէին կարողանում տեսնել թանկագին ոչխարը։ Հէնց որ կանգ էր առնում այդ ոչխարը, սատանայի ծառան խրտնացնում էր գառներին և նրբանք բոլորը խառնւում էին։ Այդ րանը ձանձրացրեց տիրոջը և նա ասաց. «Ալէքը, տիրելի բարեկամ, նեղութիւն կրիր զգուշութեամբ բռնել ոլորած պոզերաւոր թանկագին ոչխարը և կանգնեցրու նրան»։ Եւ ահա հէնց որ ասաց այդ բանը տէրը, Ալէքը յարձակւեց առիւծի պէս ոչխարների մէջ և բռնեց անդին ոչխարին ոտից և փաթաթելով ձախ ոտին, տիրոջ աչքի առաջ այնպէս ուժով բարձրացրեց, որ ոտը փշրեց։ Ալէքը կտրել էր թանկագին ոչխարի ոտը ծունկից ներքև։ Բառաչեց ոչխարը և ընկաւ առաջի ծնկների վրայ։ Ալէքը բարձրացրեց աջ ոտքից և ձախը թոյլ կախ ընկաւ։ Հառաչեցին հիւրերն ու ստրուկները և ուրախացաւ սատանան, երբ տեսաւ, թէ ինչպէս խելօք կերպով տանում էր գործն Ալէքը։ Տէրը գունատւեց, մռայլւեց և քաշ արեց պլուխը ու մի խօսք էլ չասաց։ Լուռ էին թէ հիւրերը և թէ

ստրուկները. սպասում էին թէ ինչ կը լինի։ Լուեց տէրը, յետոյ բարձրացաւ, կարծես ուզում էր մի բան հեռացնել իրենից. նա բարձրացրեց գլուխը և յառեց աչքերը դէպի երկինք։ Երկար չը նայեց նա. կճաքանները ցրւեցին նրա երեսից և նա ժպտաց ու դարձրեց աչքերը Ալէքի վրայ։ Նա նայեց Ալէքին, ժպտաց և ասաց. «Ո՛վ Ալէք, Ալէք, քո տէրը հրամայեց քեզ զայրացնել ինձ, իսկ իմ տէրը քոնից աւելի զօրաւոր է. և դու չը բարկացրիր ինձ, իսկ ես կը բարկացնեմ քո տիրոջը։ Դու վախեցար, որ ես կը պատժեմ քեզ և դու, Ալէք, ուզում էիր ազատ լինել, ուրեմն իմացիր, որ դու պատիժ չես կրել ինձնից, իսկ դու ուզում էիր լինել ազատ, ապա ուրեմն իմ հիւրերի մօտ ազատութիւն եմ տալիս քեզ։ Գնա ուր ուզում ես և վերցրու քո ծոնական հագուստը»։

Եւ բարի տէրը իր հիւրերի հետ միասին տուն գնաց։ Իսկ սատանան կրճտեց ատամները, վայր ընկաւ ծառից և անցաւ պեռնի տակ։

Լ. Ս.

ՎԵՐՋԻՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

Դարեր առաջ, երբ հալածելով Աբղար Հոգին՝ իր ճշմարտութիւնն համար ի խաչ հանելէ Գողգոթայի կատարին, Նա այն ժամանակուայ ամենախիտ տանջանքներին անգամ հակառակութեան ոչ մի նշոյլ չարտայայտեց, որովհետև Նրա մէջ գործում էին անկեղծ սէրը, անձնուրաց մարդասիրութիւնն ու ամբիծ զգացմունքը, որոնց յաղթանակի յոյսով էլ Նա տանջւում էր, և այդ տանջանքները Նրա համար և՛ փառք էին և՛ մեծութիւն։

Ու այն ձեռքերին, որոնք գամում էին սուրբ ճշմարտութիւնը, այն բերաններին, որոնք չարախօսում էին առաքինի ապրուելիքը և այն հոգիներին, որոնք ոպանում էին մարդու արդարութիւնը, ահա՝ հէնց նրանց համար Մեծ Մարդասէրը իր սրտէ ազօթում էր՝ «Ներիր դրանց, Հա՛յր, որովհետև իրենք էլ չգիտեն, թէ ի՛նչ են անում»։

Փոյթ չէր Իրեն, որ Ինքը խաչ հանուած անքում է, ու ցաւ չէր Իրեն, որ Ինքը ահա մեռնում է. Նա այդպէս էր մտածում, այդ էր զգում. որովհետև Նրա մէջ խօսում էին անկեղծ սէրը, անձնուրաց մարդասիրութիւնն և վեհ եղբայրսիրութիւնը։

Այսօր, դարեր յետոյ, ճիշտ նոյնն է...

Մարդերի ոլիկան Լև Տօլստոյը՝ իր մահի և կեանքի առաջին և վերջին րոպէներին, իր մեծ Ուսուցչի մահը —որի գաղափարները պաշտում էր հոգով ու սրտով —գարձեալ մտածում է աշխարհիս այն միլիոնաւոր տանջուողների համար, որոնք անօգնական, անպաշտպան և խնամող ձեռքերի կարօտ են։ Սրան էլ փոյթ չէ, որ ինքը ահա վիշտ է իր հոգին, կնքում է իր մահկանացուն և ասում է իրեն շրջապատողներին, «Աշխարհում միլիոնաւոր մարդիկ կան, շատերն են տանջւում, ինչո՞ւ դուք բոլորդ այստեղ միայն ինձ մօտ էք»։

Ու սա էլ այդպէս է մտածում, որովհետև՝ տասնեակ տարիներ շարունակ, սա էլ համոզւելով որ ճշմարիտ կեանքը, իսկական աշխարհը, միակ մարդասիրութեան և սիրոյ մէջ է, իր վիթխարի կուրծքը դէմ ասած, քարոզում էր՝ անկեղծ սէր, անձնուրաց մարդասիրութիւն և սուրբ եղբայրսիրութիւն, որոնք ազնիւ արդար ու ճշմարիտ օրէի համար միևնոյնն են ամէն ժամանակ և ամէն տեղ։

Մէկ դարերը կարող են նահատակել նրանց, ոչ անհատաս հանգամանքները կարող են կերպարանափոխել և ոչ դարը փորձանքները այժ կանգնան մի նշանախոյ անգամ յեղաշրջելու։

Այդ տեսակէտից Տօլստոյը անյողդողդ մնաց իր գաղափարով և չերեսաց կեանքի փորձանքներին պայքարում։

Աշխարհը մէկի, մէկն աշխարհի համար, եւ Տօլստոյը՝ մեր ժամանակի այն մէկն էր, որ ապրեց աշխարհի համար։

Յոնարհենք, ծունկ չոքենք նրա թաղմ շիրիմի առաջ, նրա յաւերժ թաղմ խոստովանան առաջ։

Ցակ. Ադաբաբ

Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

I

Լ. Ն. Տօլստօյի ընտանիքի ա-նունից խնդրում ենք ձեզ՝ ձեր թերթի միջոցով հրատարակել, որ մեր ամբողջ ընտանիքը խո-րապէս զգացած է այն ջերմ մասնակցութեամբ, որ ամենու-րեք գտաւ Լև Նիկօլաեվիչը իր հիւանդութեան ժամանակ, և այն սրտապին համակրանքով, որ մենք հանդիպեցինք նրա մահից յետոյ:

Մենք մեր ամբողջ հոգով ե-րախտապէտ ենք՝ բոլոր բժիշկ-ներին, որոնցից օգտւում էր Լև Նիկօլայեվիչը, և որոնք անձնա-զոհ և առանց վարձատրութեան իրենց աշխատանքը տուին նրան: Ռեազան-Ուրալեան երկաթուղա-յին վարչութեանը, որ ուշ Լև Նիկօլայևիչին և մեզ իրենից կախ-ւած բոլոր յարմարութիւնները: Իւան Իւանովիչ Օզոլինին, որ ղիջից Լև Նիկօլայևիչին իր բնա-կարանը. Րեազան-Ուրալեան եր-կաթուղային ծառայողներին, ո-րոնք մեզ անգնահատելի ծառա-յութիւն մատուցին. Եասնայա Պալեանայի և այլ գիւղերի գիւ-ղացիներին, բարձրագոյն ըղպ-րոցների ուսնկդիրներին և ուսնկն-ղրուհիներին, թաղման հանդէ-սի կարգադրիչներին և այն ա-մենքին, որոնք մեզ օգնութիւն հասցին և ուշադրութեան արժա-նացրին, նոյնպէս այն՝ բոլոր ան-ձանց և հիմնարկութիւններին, որոնք մեր ամբողջ ընտանիքին միասին կամ մեզանից իւրաքան-չիւրին առանձին իրենց ցաւակ-ցութիւնն են յայտնել:

Կոմսուհի Սօֆ. Տօլստօյա, Տ. Լ. Սուխօտինա, կոմս. Ալէքսան-դրա, Սերգէյ, Իլիա, Լև, Անդ-րէյ, Միխայիլ Տօլստօյներ:

II

Աշխարհի ամեն կողմից ստա-նալով համակրական հեռագիր-ներ և նամակներ մեր ծանր կո-րուստի մասին, դեռ խօսքեր չեմ պտնում, թէ ինչպէս ես, անար-ժանս պատասխանեմ դրանց իմ վշտացեալ սրտով: Ոչ մի խօս-քով չի կարելի արտայայտել այն՝ ինչ որ ապրում է իմ հոգին, բայց սիրող սրտերի արձագանքները մեղմացնում են իմ վիշտը: Դր-րանց համար բերում եմ իմ սըր-տագին վշտով լի շնորհակալու-թիւնս ամենքին, ով մասնակցու-թիւն և ցանկութիւն է արտա-յայտել իմ հոգեկան տանջանք-ներին:

Սօֆիա Տօլստայա

Եասնայա Պալեանա, 16 նոյեմ. 1910 թ.

Общедоступная библіотека

„НАРОДНАГО ЗДРАВІЯ“

(подъ редакціей профессоровъ).

26 КНИГЪ за 5 р. съ пер.

Всѣ книги отпечатаны и высилаются по полученіи денегъ или налож. платеж.

26 КНИГЪ за 5 р. съ пер.

1 кн. Проф. Бауэръ и Лейденъ. Какъ слѣдуетъ питаться (Режимъ питанія здоровыхъ больныхъ).
2. Проф. Петерсъ. Малокровіе (Анемія и хлорозъ).
3. Проф. Ф. Дорнблитъ. Гигена школьнаго возраста.
4. Проф. Сенаторъ. *79 совѣтовъ страдающимъ хронически изъ катаромъ желудка.*
5. Проф. Уффельманъ. *Гигіена мальчиковъ и дѣвочекъ.*
6. Проф. Румпфъ. *Холера.*
7. Проф. Шмидтъ. *Переутомленіе.*
8. Проф. Петерса. *104 совѣта страдающимъ геморроемъ.*
9. Проф. М. Рунге. *78 советовъ беременнымъ.*
10. *65 совѣтовъ страдающимъ сахарной болѣзнью (Діаботъ).*
11. Проф. Фурнье и Фингертъ. *85 совѣтовъ сифилитикамъ.*
12. Проф. Токсингоръ. *Дѣтскіе сады*
13. Проф. Бидевтъ. *103 совѣта при Англійской болѣзни,* (Рахитъ)
14. Проф. Пашкисъ. *Косметика.*
15. Проф. Петерса *78 совѣтовъ малокровнымъ.*
16. Д-ръ А. Б. Головинъ. *Бѣли у женщинъ.* Причины, распознаваніе предупрежденіе и леч. бѣлей.
17. Проф. Богинскаго. *96 совѣтовъ золотушнымъ*
18. Проф. М. Рунге. *Родовой актъ.*
19. Проф. Эйхгорстъ, *143 совѣта чахоточнымъ.*
20. Проф. Зелигмиллеръ и Лейфенъ. *Головная боль и кормленіе больныхъ*
21. Проф. Ф. Коссбахъ. *Естественные методы леченія.*
22. Д-ръ мед. А. Б Юрьевъ. *Поллюціи, прачины и устраненіе ихъ Съ включеніемъ главъ о половомъ безсиліи и оканизмѣ.*
23. Проф. Рубнеръ. *Запаленія организма*
24. Проф. Андре, Труссо и Шребера. *91 совѣтъ старикамъ и старухъ.*
25. Проф. Банзвангеръ. *Усиленное питаніе.*

Кромѣ перечисленныхъ 25 книгъ, прилегается безплатно большой томъ около тысячи страницъ, отпечатан. на хорошой бумагѣ общедоступное руководство, **ПРЕДУПРЕЖДЕНІЕ БОЛѢЗНЕЙ И СОХРАНЕНІЕ ЗДОРОВЬЯ,** составлен. профессоромъ Г. В. Хлопинымъ и докторами: В. В. Гориневскимъ, О. А. Литинскимъ' А. В. Погожевымъ, М. Н. Покровской, И. Н. Плековскимъ. М. А. Раскиной и А. И. Скобневскимъ. Подъ редакціей Проф. Г. В. Хлопина. Введеніе къ руководству Проф. О. Ѳ. Эрисманъ. Съ рисунками и рецептами въ текстѣ.

Требованія адресовать: **С.-Петербургъ, Звѣринская ул., д. № 1.**

Книжный складъ Медицинской Литературы.

(2—2)

ԲԱՑՎԱԾ Է 1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ

XXIX ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XXII ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակուում են ճոխ, բազմաբովանդակ, ժամանակցութեամբ մեր և եւրոպական յայտնի դրականագէտների, մանկավարժների և արուեստագէտների։

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ

I. *ԱՂԲԻՒՐ* պատկերազարդ ամսագիրը «Մանկական Աշխարհ» յաւելուածով։

II. *ՏԱՐԱԶ* պատկերազարդ հանդէսը «Թատրոն և Երաժշտութիւն յաւելուածով։

III. *ԱՌՈՂՋԱՊԱՀ* պատկերազարդ ամսաթերթը «Հոգու և Մարքի առողջութիւնը» յաւելուածով։

IV. *ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ* III և IV պրակները.

V. *ԴԵՂԱՓՆՋԻԿ ՕՐԱՑՈՑՑ 1912 Թ.*

VI. *ԱՐՈՂՋ.* Fantasie իրականութիւնից։

VII. *ՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆՆ*, շքեղ նկար ապակեայ պատրաստ շրջանակով, յարմարեցրած թէ սեղանի վրայ դնելու և թէ պատից կախելու։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՂԲԻՒՐ տարեկան 3 ր. Արտասահման. 5 ր. Դպրոցական աշակերտների համար 1 ր.

ԱՌՈՂՋԱՊԱՀ » 2 ր. (Արտասահման. 3 ր.) 1—50 կ.

ԱՂԲԻՒՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀ 5 ր. (Արտասահմ. 7 ր.) 2 ր.

Ա Ղ Բ Ի Ւ Ր, Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ

ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ

Դ Ե Ղ Ա Փ Ն Ջ Ի Կ-Օ Ր Ա Ց Ո Ց Ց

ՍՐՈՂՋ, ՈՒԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Բոլոր յաւելուածներով եւ պրէմիաներով

10 Ր. Արտասահ. 18 Ր. կամ 50 ՖՐ.

5 Դպրոց. աշակ. համար չէնք ր.

Ապառիկ և մաս-մաս բաժանորդագրութիւն չի ընդունուում։

Այն պարոնները, որ 50 բաժանորդ կբերան Աղբիւրին, նրանց կուղարկուի 5 օրինակ Աղբիւր չքաւոր աշակերտների համար։

Հասցէն՝ Тифлис. Редакція «АГБЮР» կամ «ТАРАЗ»

Tiflis. (Caucase) Direction „Agbür" կամ „Taraz"

Տպագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆ

Հրատարակիչ «ԷՄՊԵՐԱՆՏՈ» Ելիզաւետինսկայա № 17.